ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հուլիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հունաստանի պաշտպանության նախարարության պատվիրակությունը՝ նախարար Ակիս Ցոխաձոպուլոսի գլխավորությամբ: Պատվիրակությանն ուղեկցում էին Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ցակովոս Սպեցիոսը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, երկու երկրների նախարարությունների աշխատակիցներ: Վեհարանում հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Տեղի ունեցած զրույցի ընթացքում Հունաստանի պաշտպանության նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Հայաստան կատարած իրենց այցելության նպատակները: Նա հայտնեց, որ երկու երկրների պաշտպանության նախարարությունների միջև կնքված համաձայնագիրն այսուհետև էլ ավելի կնպաստի մեր երկրների և ժողովուրդների միջև դարավոր բարեկամության ամրապնդմանը:

Նորին Սրբությունն, իր գոհունակությունը հայտնելով ձեռք բերված համաձայնության և փոխըմբռնման առթիվ, ընդգծեց, որ հայ և հույն ժողովուրդները դարեդար միմյանց նկատմամբ եղբայրական ջերմ զգացումներ են տածել, պատմության տարբեր ժամանակահատվածներում կիսել նույն դառը ճակատագիրը, բայց և այնպես տոկացել են ու վերածնվել՝ շնորհիվ իրենց համընդհանուր հրիստոնեական հավատքի: Մենք երբեք չենք մոռանում, որ Հունաստանն առաջին երկրներից մեկն էր, որտեղ ապաստան գտան եղեռնից մազապուրծ հայ ժողովրդի մասնիկները: Նորին Սրբությունը մեծ ուրախությամբ նշեց, որ իբրև կենդանի վկայություն Հայ և Հույն Եկեղեցիների, պետությունների ու ժողովուրդների անխախտ բարեկամության և եղբայրության, շուտով առաջին անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Հայաստան է ժամանելու Հույն Ուղղափառ Եկեղեցու Պետ, Կ.Պոլսի Տիեզերական Պատրիարք Բարթողիմեոս Ա-ն:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը և նախարարը փոխանակեցին նվերներ, ապա հարգարժան հյուրերը մեկնումից առաջ շրջեցին Վեհարանի թանգարանում և ծանոթացան արվեստի ցուցադրվող գործերին:

«ՄԱԳԱՏԷ»-Ի ՏՆՕՐԵՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հուլիսի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց «ՄԱԳԱՏԷ»-ի՝ Ատոմային Էներգետիկայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն պարոն Հանս Բլիքսը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության ատոմային էներգիայի վարչության պետ պարոն Գևորգյանի ուղեկցությամբ: Վեհարանում հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիպման ընթացքում պարոն Բլիքսը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց «ՄԱԳԱՏԷ» կազմակերպությունը, որը հանդիսանում է Միացյալ Ազգերի Կազմակերպության անդամ: Կազմակերպության հսկիչ-աշխատակիցները, շրջելով ամբողջ աշխարհում, վերահսկում են ատոմային էներգիայի գործադրությունը և ռեսուրսները: Այդպիսով նրանք պայքար են մղում ատոմային զենքի դեմ և բոլոր